ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 860-Ա « 16 » փետրվարի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ի Հ.7849-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 10.02.2026թ. հ.20-Ել-7849 եզրակացությունը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 19.03.2021թ. հ.506 և հ.508 վկայագրերը, ինչպես նաև քաղաքացի Կարեն Կիրակոսյանի՝ ի դեմս ներկայացուցչի 05.12.2022թ. հ.Դ-115076-22 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2009 թվականի սեպտեմբերի 21-ի «Լևոնյան փողոցի հ.14 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Մայրանուշ Սենիկի Գաբրիելյանի, Օնիկ Արարատի Կիրակոսյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.7849-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագրում, նախաբանում, 1-ին, 5-րդ կետերում՝ «Մայրանուշ Սենիկի Գաբրիելյանի, Օնիկ Արարատի Կիրակոսյանի» բառերը փոխարինել «Կարեն Օնիկի Կիրակոսյանի» բառերով.

2) Որոշման նախաբանում՝ «Մայրանուշ Սենիկի Գաբրիելյանի (ծնված 18.07.1926թ.), Օնիկ Արարատի Կիրակոսյանի (ծնված 04.01.1952թ.)» բառերը փոխարինել «Կարեն Օնիկի Կիրակոսյանի (ծնված 14.09.1975թ.)» բառերով:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ